

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

ՌՈՒԶԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական ճակատագրի բերումով հայ ժողովրդի գրական կյանքն անցել է զարգացման ինքնատիպ փուլեր. դա պայմանավորված էր ոչ միայն արևելահայության և արևմտահայության հասարակական, քաղաքական կյանքով, այլև մշակութային ազդեցություններով, կապերով, ժամանակի գեղագիտական պահանջներով: Հայ մշակութային կենտրոններում՝ Թիֆլիս, Մոսկվա, Պետերբուրգ, Ռոստով, Լվով, Կ. Պոլիս, Փարիզ, Վիեննա, Զմյուռնիա, Վենետիկ, Կահիրե և այլն, իր ուրույն դերն ու նշանակությունն է ունեցել պարբերական մամուլը, որը, կախված տվյալ պարբերականի գաղափարական ուղղվածությունից, յուրովի արձագանքել է հայության հրատապ խնդիրներին, նպաստել նրա կրթամշակութային առաջընթացին:

Հայ ժողովրդի երկու հատվածները կապող այդպիսի մի կենտրոն է եղել և մնում Վենետիկի Սբ. Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանությունը, որի հրատարակած «Բազմավեպ» ամսագիրը, առ այսօր հավատարիմ մնալով իր հիմնադրի և առաջին խմբագրի՝ Գաբրիել Արք. Այվազովսկու սկզբունքներին, փորձում է համաշխարհային պատմության այս սրբնթաց ռիթմի մեջ շարունակել իր հայանպաստ գործունեությունը:

Թերթելով միաբանության հրատարակած «Բազմավեպ» հանդեսը, որն ավելի քան 170 տարի հայության համար դարձել է գիտական, կրթամշակութային և գրական կապերի մի խաչմերուկ, համոզվում ես, որ ընթերցողների հոգևոր և գրական ճաշակի դաստիարակությունը շարունակում է մնալ խմբագրության աշխատակիցների տեսադաշտում:

1843 թվականից սկսած՝ «Բազմավեպ»-ում պարբերաբար ներկայացվում էին նաև Ռուսաստանի պատմությանը, մշակույթին և հասկապես գրականությանը նվիրված հոդվածներ, գրախոսություններ, ակնարկներ, հաղորդումներ, թարգմանություններ, գրականություն, որն իր մարդասիրական գաղափարներով, համամարդկային խնդիրների ընդգրկմամբ, հավատքի, անհատի հոգևոր «հարության» մասին հարցադրումներով որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում մխիթարյանների համար: Բարոյական և հոգևոր արժեքների, արդարության և մարդկային ճիշտ փոխհարաբերությունների որոնումները, որոնք արձարծվում էին ռուս դասականների ստեղծագործություններ:

րում, համահունչ էին ամսագրի կրոնաբարոյական, փիլիսոփայական ու գաղափարական ուղղվածությունը:

Ռուս դասականներին նվիրված նյութերը հիմնականում ներկայացվում էին երեք սկզբունքով. տեղեկատվական բնույթի ոչ մեծ ծավալի հոդվածներ, որոնք ուղեկցվում էին նաև տվյալ հեղինակի (եթե բանաստեղծ էր) որոշ ստեղծագործությունների թարգմանությամբ, համառոտ կենսագրականներ, ինչպես նաև համեմատական-գուգադրական բնույթի գրականագիտական հոդվածներ, որոնցում գուգահեռ էր անցկացվում ռուս կամ ռուս և եվրոպացի գրողների ու նրանց ստեղծագործությունների միջև: Կարելի է առանձնացնել նաև քննադատական բնույթի հոդվածներ, որոնցում փորձ է արվում վերլուծել ռուս հեղինակի այս կամ այն ստեղծագործությունը՝ առաջնորդվելով համաշխարհային գրականության զարգացման օրինաչափություններով:

Միաժամանակ հարկ է նշել, որ ամսագրի աշխատակիցները այդ նյութերը մշակում և համակարգում էին՝ օգտվելով մի քանի աղբյուրներից. հոդվածներ, որոնք ստեղծվել էին խմբագրության աշխատակիցների և թղթակիցների կողմից, արևելահայ, ինչպես նաև արևմտաեվրոպական պարբերականներում ճանաչված գրողների և գրականագետների տպագրած հոդվածների և թարգմանությունների վերատպում: 19-րդ դարի 40-ական թվականներից սկսած՝ «Բազմավեպ» ամսագիրը դարձավ գրական կապերի մի յուրօրինակ խաչմերուկ, որտեղ իրենց անդրադարձումներն էին ստանում արևմտաեվրոպական և ռուս գրականության զարգացումները: Հայ ընթերցողին էին ներկայացվում ռուս ճանաչված գրողները՝ Ի. Դմիտրիև, Գ. Դերժավին, Ի. Կոնյով, Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Ն. Նեկրասով, Ն. Գոգոլ, Ի. Տուրգենև, Լ. Տոլստոյ, Ա. Չեխով, Մ. Գորկի, Լ. Անդրեն և ուրիշներ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Բազմավեպ»-ում ներկայացվել են այնպիսի հեղինակներ, որոնց ստեղծագործությունները վերաբերում էին Ռուսաստանում տեղի ունեցող նշանակալից իրադարձություններին: Այսպես, 1846 թվականին ամսագրի «Բանասիրական տեղեկություն» բաժնում ներկայացվում է ռուս հայտնի գրող Ի. Դմիտրիևը: Կենսագրական որոշ տեղեկություններից հետո, բարձր գնահատելով գրողին, ով «հավասարապես տիրապետում է և՛ զենքին, և՛ զրջին», համեմատելով նրան մեր Գրիգոր Մագիստրոսի հետ, հեղինակը կենտրոնանում է նրա «Երմակ» կոչվող, ինչպես հեղինակն է ասում, դյուցազնական տաղի վրա: «Երմակ անունով քաջ մարդը, - գրում է նա, - Դոնսքի ըսված կազակներուն ատամանը՝ այսինքն զորապետն էր, Սիբիր կամ Սիբիրիա կոչվող ընդարձակ երկիրը տիրեց ու ետքը ռուսաց Իվան Դ թագավորին ընծայեց»¹: Հեղինակը միաժամանակ խո-

¹ Գրաբար և արևմտահայերեն մեջբերումները ներկայացվում են ժամանակակից ուղղագրությամբ:

սում է կից ներկայացվող պոեմի թարգմանության մասին՝ նշելով, որ «Երմակ» դրուցագնական տաղը «հոս հայերեն կթարգմանինք հավատարմությամբ և հանգի կատարելությունը թարգմանության ճշտությամբ կգոհաբերենք»:

Ի դեպ, հողվածի հեղինակի և թարգմանչի անունը նշված չէ, որը բնորոշ էր ամսագրի աշխատատեղին (սկզբնական շրջանում նյութերը անստորագիր էին)²: Պոեմը թարգմանված է գրաբար.

Какое зрелище пред очи	Զոր ինձ տեսիլ բացեր հանդէպ
Представила ты, древность, мне?	Ո՛, հինատուրց ժամանակ:
Под ризою угрюмой ночи,	Ընդ օթոցաւ ժանտ գիշերոյ
При бледной в облаках луне	Մինչ յամպս անգոյն կայ լուսին,
Я зрю Иртыш: крутит, сверкает,	Դիտեմ զիրթիշ, գոչէ, շանթէ,
Шумит и пеной подмывает	Եւ, ի՛ գրրգանս պըտուտկեալ
Высокий берег и крутой...	Փըրփուր ժայթթէ ըզմըկանամբք
	Կոծէ զափունս ապառաժ:

Տեղեկատվական բնույթի է նաև Գ. Դերժավինին նվիրված հողվածը, որին կից տպագրված է նրա հայտնի «Աստված» (“Bor”) բանաստեղծության թարգմանությունը: «Գավրիլ Ռոմանովիչ Դերժավինը,- գրում է հողվածի հեղինակ և թարգմանիչ Ա. Նալբանդյանը,- ռուսաց բանասիրության տաճարին գլխավոր սյուններեն մինը կհամարվի և այս թարգմանական նվագս նրա քերթվածներեն է, ծագեց իբրև լուսասփյուռ արշալույս տաղանդավոր նվագերգիչին ապառնի փառացը»:

Հեղինակն իր վերլուծություններում անդրադառնում է Դերժավինի քնարերգության փիլիսոփայական, ինչպես նաև գեղարվեստական արժանիքներին՝ ցույց տալով ռուս պոեզիայի զարգացման և հաջորդականության ուղին. «Այս նվագին գրեթե համաշխարհային ժողովրդականություն ստանալու պատճառը,- գրում է նա,- այն է, որ յուր դասական վսեմության աստվածաբանական և փիլիսոփայական խորին և անմատչելի իմաստներեն զատ, կշնչեր նա մի վիթխարի ուժով... Նրա լարերու կորովի բաբախման խորքեն կլսվեր քնարերգակին ներդաշնակության մրմունջը, որուն հետքերը հետո դուրս ելան Պուշկինի մի քանի նախնական ստեղծագործություններու մեջ»: Թարգմանիչը, նշելով, որ բանաստեղծության տպագրությունից հետո այն թարգմանվել է մի քանի լեզուներով՝ գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն, լեհերեն, չեխերեն, լատիներեն և անգամ ճապոներեն, գրում է. «Նշված անվանի նուագը մենք հարկ համարեցանք թարգմանել գրաբար լեզվով, նորա աստվածաբանական և փիլիսոփայական խորին իմաստները առավել դյուրությամբ բացատրելու նպատակով և ըստ կարյաց աշ-

² Տե՛ս «Տիվիթի», Ռուս բանաստեղծ», «Բազմավեպ», Դ տարի, 1846, № 23, էջ 359-362:

խատեցանք այն հայկաբանել, հուսանք նաև, որ հայագետ ընթերցողները մեր թերութեանց ներողամիտ կլլան»³:

«Բազմավեպ»-ում առանձնահատուկ տեղ է հատկացվել Ա. Պուշկինի և Մ. Լերմոնտովի կյանքի և ստեղծագործությունների լուսաբանմանը. կենսագրականներին, համադրական-վերլուծական բնույթի հոդվածներին զուգահեռ ներկայացվել են նաև նրանց բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները: Հիմնականում հետապնդելով ճանաչողական նպատակ՝ դրանք աչքի չեն ընկնում նյութի բազմակողմանի իմացությամբ և վերլուծությունների խորությամբ, առավելապես նվիրված էին բանաստեղծների ծննդյան, մահվան, հոբելյանական տարեթվերին, ստեղծագործությունների ընդհանուր բնութագրմանը: Այսպես, 1876 թ. «Բազմավեպ» ամսագրի «Հանդես կենսագրական» բաժնում տպագրված Քերովբե վ. Քուշներյանի «Ալեքսանդր Բուշին» չափազանց զուսպ և հակիրճ հոդվածում ներկայացվում է բանաստեղծը. «Անաչառ քննիչը կդասեն Բուշին Ռուսիո բանաստեղծներուն առաջին կարգը. Ունի ծննդկան միտք, աշխույժ երևակայություն, ընտիր լեզու՝ վսեմ պարզությամբ խառնված»⁴:

Պուշկինի և Լերմոնտովի ստեղծագործությունների համեմատական վերլուծությանն է նվիրված նաև 1905 թ. «Բազմավեպ»-ում տպագրված «Հ. Մ. Երեմ» ստորագրությամբ «Պուշկին և Լերմոնտով» հոդվածը: Գրախոսելով Ա. Ծատուրյանի «Ռուս բանաստեղծները» գիրքը (Մոսկվա, 1905)՝ հոդվածագիրը ծանոթացնում է ընթերցողին Պուշկինի և Լերմոնտովի «Մեղեդիներու հոգեբանությանը»: «Լերմոնտով և Պուշկին, - գրում է նա, - իրարմե անբաժան, դյուրիչ քնարներ են, իրենց նութաները կհավնե հետին, անուս գեղջուկը, սրտացավ, անպաճույճ, անկաշկանդ պարզություն մը ունին և այդ պարզության մեջ է իրենց դասական համբավը...»: Վերլուծելով երկու բանաստեղծների հատկապես խոհափիլիսոփայական բանաստեղծությունները՝ հեղինակը ցույց է տալիս այն ներքին տազնապները, որոնք փոթորկում էին երկու բանաստեղծներին, կյանքի, աշխարհի ու բնության հավերժության մասին նրանց պատկերացումները:

Յուրահատուկ վերաբերմունք ուներ Ք. Քուշներյանը իր ժամանակակցի՝ Ն. Նեկրասովի անհատականության և նրա բանաստեղծական ժառանգության հանդեպ, որի կյանքն ու ստեղծագործությունը մանրամասն ներկայացրել է «Բազմավեպ»-ում 1879 թ. տպագրված հոդվածում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով բանաստեղծի պոեզիայի հատկապես թեմատիկ և գաղափարական ուղղվածությանը՝ պոետի կոչումը տեսնելով ժողովրդի պատմության, սոցիալական վի-

³ Ա. Նալբանդյան, Գավրիլ Ռոմանովիչ Դերժավինը և նորա հոշակավոր նուագը «Աստուած», «Բազմավեպ», 1903, մայիս, թիւ Ե, էջ 225-227:

⁴ Քերովբե վ. Քուշներեան, Ալեքսանդր Բուշին, «Բազմավեպ», 1876, № 1-12, էջ 248-250:

ճակի և ապագայի մասին ճշմարտացի պատկերման մեջ. «Նիկրասովը իր հանճարը և գրիչը նվիրեց ժողովրդական նկուն և հարստահարյալ վիճակին, պաշտպանելով նրանց, ողբալով և հանդիմանելով հարստահարիչներին»:

Հ. Քերովբե Քուշներյանը անդրադառնում է ոչ միայն Նեկրասովի բանաստեղծություններում առկա նոր գաղափարներին, այլև լեզվին և ոճին՝ նրա պոեզիան համեմատելով հրաբխից ժայթքող լավայի հետ: Ընթերցողին ծանոթացնելով նրա բանաստեղծական աշխարհին՝ գրում է. «Իրավ նա Դանթեի նման երկրից չի վերանա, սանդարս չիջներ և մտացածին պատիժներ չի հանճարեր՝ անօրինությունները հայտնաբերելու և պատժելու համար, այլ գեղերու, տնակներու մեջ կբանա դժոխքը...»⁵: Վերլուծելով Նեկրասովի պոեզիան՝ Քուշներյանն անդրադառնում է այն կարևոր խնդիրներին, որոնք իր առջև դրել էր ռուս մեծ բանաստեղծն ու քաղաքացին. «Նեկրասովի բանաստեղծությունների գրեթե մեծագույն մասի նպատակն է յուր խեղճ ու ընկած ազգը. ռուսաց մուժիկը քաղաքականացնել, կրթել, լուսավորել, ճանչեցնել, որ նա ալ իշխողաց հավասար արարած մե, անոր համար անխնա կպախարակե և կողբա»: Անդրադառնալով հոդվածում բանաստեղծի կոչմանն ու գործին՝ հավատացած է, որ մեծ ու իսկական բանաստեղծի գործը ոչ միայն չի կորչելու, այլև նրա վարած ակոսների մեջ ժողովուրդը պետք է սերմեր դնի («Առ սերմնահանս»):

Քուշներյանը, թարգմանաբար ներկայացնելով Նեկրասովի վերջին բանաստեղծություններից մեկը՝ «Սկիզբ վերջին երգոց» (1876-77), հույս է հայտնում, որ Նեկրասովի պոեզիան ճիշտ կթարգմանվի և կներկայացվի հայ ընթերցողին. «Բանաստեղծիս վերջին գրվածո ճաշակ մը տանք մեր ազգին, ճարտարագույն գրիչ մը, վսեմ և ճոխ լեզվով, Նեկրասովի ոգելից տաղերով կհարստացնե հայկական մատենագիտությունը»:

Ի. Տուրգենևի ստեղծագործության վերլուծությանն է նվիրված 1877 թ. «Բազմավեպ»-ում տպագրված «Իվան Տուրգենև» անստորագիր հոդվածը, որը, կարծում ենք, հնարավոր է՝ հեղինակել է Ք. Քուշներյանը՝ ելնելով հոդվածի ընդհանուր ոգուց, գրելաոճից և բարձրացված հարցադրումից⁶: Հոդվածում ներկայացվում են դարասկզբի ռուս գրականությունը, գրական կապերն ու առնչությունները, տրվում են գնահատականներ ռուս բանաստեղծներ Պուշկինին և Լերմոնտովին, հեղինակն անդրադառնում է Գրիբոյեդովին և Գոգոլին՝ նշելով, որ վերջինիս շնորհիվ «ռուս մատենագրությունը երկիր իջավ, հաստատություն առավ, մարդամտի եղավ»: Խոսելով Տուրգենևի արևմտյան կողմնորոշման մասին, ընդգծելով, որ նա բացարձակապես նոր և թարմ խոսք է

⁵ Ք. Վ. Քուշներևան, Նեկրասով ազգային բանաստեղծ Ռուսաց, «Բազմավեպ», 1878, № 1-12, էջ 169-179:

⁶ Տե՛ս «Բազմավեպ», 1877, № 1, էջ 137-145:

բերում ռուս գրականություն, հողվածագիրը փորձում է բնութագրել գրողի ստեղծագործությունները՝ ելնելով փիլիսոփայական և գաղափարական ուղղվածությունից, հասարակության սոցիալական խնդիրների լայն պատկերումից. «Տուրգենևը մասնավորապես բարոյագետ էր գրականության մեջ, այսինքն թե իրական կերպարանց նկարագրության վրա միայն կկենտրոնացնենք իր ուշադրությունը»⁷, - գրում է հեղինակը:

Խոսելով «Բազմավեպ»-ում տպագրված ռուս դասականներին նվիրված հողվածների ու թարգմանությունների մասին՝ չի կարելի չնշել նաև Լև Տոլստոյի անունը: Մեծ էին նրա ճանաչումը և հեղինակությունը համաշխարհային մշակույթում դեռևս իր կենդանության ժամանակ: Հատկանշական է, որ հայերը սկզբում ծանոթացել են նրա կրոնաբարոյագիտական, փիլիսոփայական ստեղծագործություններին, հետո՝ գեղարվեստական: Դա հավանաբար պայմանավորված էր համամարդկային այն խնդիրներով ու գաղափարներով, որոնց մասին գրում և ահագանգում էր մեծ քաղաքացին ու հումանիստը: Ինչպես ցույց է տալիս արևելահայ և արևմտահայ պարբերական մամուլի ուսումնասիրությունը, նրա այդ բնույթի հողվածներն ու ստեղծագործությունները հուժկու ալիք բարձրացրին հայ հասարակական կյանքում⁸: Այս ամենից, բնականաբար, անմասն չէր մնում նաև «Բազմավեպը», որը իր ընդգրկումներով, խորությամբ ու հայ մշակույթի զարգացման և արժևորման դերով անկյունաքարային տեղ է զբաղեցնում հայ պարբերականների պատմության մեջ: Այսպես օրինակ՝ իր ընթերցողներին Տոլստոյի կրոնական, բարոյագիտական հայացքներին, ինչպես նաև կյանքին ծանոթացնելու համար «Բազմավեպ»-ում տպագրվում են՝ «Ի տոնի ամենասուրբ երրորդութեան» (1895 թ.), «Մէր» (1905 թ.), «Կեանքի մասին» (1908 թ.) և այլ ստեղծագործությունները⁹: Նրա հայացքների քննարկմանն է նվիրված Ս. Երեմյանի «Մենք մեր հույսը» հողվածը¹⁰:

Լև Տոլստոյի «Կյանքի մասին» ստեղծագործության հայերեն տպագրության առիթով խմբագրությունը նշում է, որ գրողի 81-ամյակը պետք է շոնդալից տոնվեր ամբողջ աշխարհում, եթե «ռուս մեծ գրագետը արգիլած չըլլար»: Ներկայացնելով այս գործը՝ խմբագրությունը հույս ունի, որ այն հնարավորություն կտա հայ ընթերցողին «ծանոթանալու նրա գաղափարներին»: Թարգմանիչը (Վ. Ազատյան) գրում է, որ այս ստեղծագործությունը առաջին անգամ տպագրվել է անգլերեն:

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս **Ռ. Տեր-Գրիգորյան**, Հայ պարբերական մամուլը Լ. Տոլստոյի կրոնաբարոյագիտական հայացքների մասին (1880-1920 թթ.), «Քրիստոնեությունը և Հայաստանը» ժող., Ե., 2001, էջ 58-76:

⁹ Տե՛ս «Բազմավեպ», 1895, № 1, էջ 268-269 (հատված), 1905, № 2, էջ 292-300, 1908, № 3, էջ 2, 7:

¹⁰ Տե՛ս «Բազմավեպ», 1903, № 11, էջ 473-477:

Միաժամանակ նշում է, որ ռուսերեն լույս տեսնելուց հետո այն բնագրից թարգմանվել է հայերեն:

Ռուս դասականների ստեղծագործությունների գրաբար և արևմտահայերեն թարգմանությունները կատարվում էին երկու սկզբունքով՝ բնագրից և միջնորդ լեզվից (հիմնականում ֆրանսերենից, ավելի հազվադեպ՝ անգլերենից և գերմաներենից), որը հիմնականում պայմանավորված էր գրական առնչություններով և մշակութային ազդեցություններով, որոնց ձևավորման խաչմերուկում էին նաև Մխիթարյան միաբանությունում տպագրվող «Բազմավեպ» ամսագիրը և նրա աշխատակիցները:

Ի դեպ, «Բազմավեպ»-ում հաճախ կարելի է հանդիպել թարգմանիչների կողմից արված հղումների: Գիտակցելով բնագրի վերստեղծման դժվարությունները՝ թարգմանիչները անդրադառնում էին թարգմանական իրենց սկզբունքներին, նշում իրենց նկատառումները, բնագրից կամ միջնորդ լեզվից թարգմանված լինելը և այլն: Հարկ է նշել, որ թարգմանական հարցերի մասին գրում էին ոչ միայն թարգմանիչները, այլև նրանք, ովքեր զբաղվում էին թարգմանության տեսության հարցերով՝ հիմնավորելով տեսական գիտելիքների անհրաժեշտությունն ու կարևորությունն այդ գործում:

«Բազմավեպ»-ում տպագրված ռուսական պոեզիայի և որոշ արձակ ստեղծագործությունների թարգմանություններն ունեն իրենց ուրույն պատմությունը և կարևոր դեր են կատարել ռուս գրականության ճանաչման ու հայացման գործում: Թարգմանիչներն ազատորեն են մտնեցել թարգմանություններին. վերնագրեր են դրվել անվերնագիր բանաստեղծություններին, հաճախ դիմել են ազատ թարգմանության, կրճատումների կամ հավելումների և այլն:

Հարկ է նշել, որ ամսագրի տպագրության առաջին իսկ տարիներից ընթերցողին են ներկայացվել նաև Ի. Կոխլովի առակները, որոնց թարգմանչի անունը նշված չէ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց թարգմանիչը ամենայն հավանականությամբ եղել է Գ. Արք. Այվազովսկին («Երաժիշտք», «Կադնին և եղեգնը», «Կատուն և սոխակը» և այլն)¹¹: Հետագայում՝ 1870 թ., նա Կոստանդնուպոլսում հրատարակում է Կոխլովի առակների իր թարգմանությունների ժողովածուն (մոտ 305 առակ)¹²: Հ. Ք. Քուշներյանը ևս, ով երկար տարիներ եղել է «Բազմավեպ»-ի թղթակիցը, թարգմանել ու տպագրել է Կոխլովի առակները, ռուս պոետների բանաստեղծությունները¹³, հատվածաբար նաև՝ Պուշկինի «Ճանապարհորդություն Էրզրում» ստեղծագործությունը¹⁴:

¹¹ Տե՛ս «Բազմավեպ», «Երաժիշտք», 1844, № 19, էջ 288, «Կադնին և եղեգն», «Կատուն և սոխակ», 1866, № 11, էջ 347:

¹² Տե՛ս Գ. Այվազեան, Առակք Յովհաննու Քոխլովի, Կ. Պոլիս, 1870:

¹³ «Բազմավեպ»-ում տպագրված Ք. Քուշներյանի թարգմանությունները հետագայում ընդգրկվում են նրա «Առակք. ծաղկաքաղ և ինքնագիր» գրքում, Վենետիկ, Ս. Ղազար, 1904:

¹⁴ Տե՛ս «Բազմավեպ», 1886, պ. Ա, էջ 4-22:

Ըստ արժանվույն պետք է գնահատել նաև բանաստեղծ, թարգմանիչ, գրական-հասարակական գործիչ Հովհաննես Պալյանին, որի մասին, ի դեպ, շատ քիչ տեղեկություններ կան. 1899-1905 թթ. տպագրվել է «Բազմավեպ», «Արևելյան մամուլ», «Ծաղիկ» պարբերականներում, թարգմանությունները կատարել է հիմնականում բնագրերից՝ ռուսերենից, ֆրանսերենից, անգլերենից, գերմաներենից (Պուշկին, Լերմոնտով, Նեկրասով, Նիկիտին, Չեխով, Տոլստոյ, Բայրոն, Շիլլեր, Հայնե...): Մոռացությունից փրկված պալյանական թարգմանություններն այսօր էլ կարող են համարվել այդ հեղինակներից կատարված հաջողված թարգմանություններ¹⁵:

Հովհ. Պալյանի թարգմանությունների մեծ մասը խոհափիլիսոփայական բնույթի են, համահունչ են «Բազմավեպ»-ի հիմնական ուղղվածությանը: Մարդկային կյանքի անցողիկության, մարդու և բնության ներդաշնակության, հոգու հավերժության, կյանքի իմաստի որոնման և բազմաթիվ այլ հարցերի են պատասխանում «Բազմավեպ»-ում տպագրված պալյանական թարգմանությունները¹⁶:

Այսպիսով, ռուս դասականների և նրանց ստեղծագործությունների մասին «Բազմավեպ» ամսագրում տպագրված հոդվածների և թարգմանությունների համառոտ անդրադարձն իսկ վկայում է, որ ռուս գրականությունը մշտապես եղել է խմբագրության աշխատակիցների ուշադրության տեսադաշտում:

Բանալի բառեր – *Մխիթարյան միաբանություն, Վենետիկ, «Բազմավեպ», ռուս գրականություն, քննադատություն, թարգմանություն*

РУЗАН ТЕР-ГРИГОРЯН – *На перекрестке литературных связей.* – Литературная жизнь армянского народа, волею его исторической судьбы, имела своеобразное развитие, обусловленное не только общественно-политической жизнью западных и восточных армян, но и культурным влиянием, литературными связями, эстетическими требованиями времени.

Связующим центром, объединившим западных и восточных армян, был и остается ежемесячный, издаваемый Конгрегацией мхитаристов (Венеция, остров Св.Лазаря) с 1843 года журнал «Базмавеп».

И.Крылов, И.Дмитриев, Г.Державин, А.Пушкин, М. Лермонтов, Н.Некрасов, Н.Гоголь, И.Тургенев, Л.Толстой, А.Чехов, М.Горький, Л.Андреев – вот далеко не полный перечень имен русских авторов, о которых в журнале «Базмавеп» печатались разного рода материалы: биографические сведения, рецензии, очерки, литературно-критические статьи. В ряде случаев они сопровождались публикацией переводов отдельных произведений. Кроме того, публиковались

¹⁵ Հովհ. Պալյանի թարգմանությունների մասին մանրամասն տե՛ս **Ռ. Ա. Տեր-Գրիգորյան**, Հովհաննես Պալյան բանաստեղծը և թարգմանիչը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, № 1, էջ 136-144:

¹⁶ Մանրամասն տե՛ս «Բազմավեպ», 1903, թիւ Ժ, էջ 447, 1904, թիւ Թ, էջ 452, 503, 458, թիւ Ը, էջ 442-444, թիւ ԺԲ, էջ 532-534, թիւ Ը, էջ 378-381, 1905, թիւ Է, էջ 356-357, թիւ Գ, էջ 233, 270-272, 449-450, թիւ Թ, էջ 405-406:

статьи, посвященные вопросам русской истории, культуры. Публикации переводов зачастую сопровождалась заметками переводчиков, в которых раскрывались переводческие принципы, выделялись трудности перевода, отмечался способ перевода – с оригинала или через язык-посредник.

Журнал «Базмавеп» был своеобразным перекрестком армяно-русских литературных связей, и в истории этих взаимосвязей ему принадлежит заметное место.

Ключевые слова: *конгрегация мхитаристов, Венеция, «Базмавеп», русская литература, критика, перевод*

RUZAN TER-GRIGORYAN – *At the Crossroad of Literary Links.* – The monthly magazine “Bazmavep”, issued from 1843 by Congregation of Mchitarist’s (Venice, St.Lazar Island) has occupied a peculiar place in the history of Armenian-Russian literary links. I.Krilov, I.Dmitriev, G.Derzhavin, A.Pushkin, M.Lermontov, N.Nekrasov, N.Gogol, I.Turgenev, L.Tolstoy, A.Chekhov, M.Gorki, L.Andreev: all these and other names appeared on the pages of “Bazmavep”. Different materials connected with these authors have been published in the magazine: biographical data, essays, literary criticism, translations of certain works, articles on Russian history and culture.

Key words – *Kongregation of mchitarists, Venice, <Bazmavep>, Russian literature, translation*